

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2020 թվականի հունիսի 19-ի թիվ «1» որոշմամբ

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն անշարժ գույքի վարձակալությամբ տրամադրման պայմանով՝ համապատասխան տարածքում սննդի կազմակերպման ծառայության մատուցման նպատակով հայտարարում է մրցույթ: Վարձակալության վճարը կազմում է՝ 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ (կամ 720000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ), կոմունալ ծախսեր՝ բացառությամբ էլեկտրաէներգիայի վճարի: Պայմանագիրը նախատեսվում է կնքել մինչև 36 ամիս ժամկետով:

Վարձատուն՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, որը գտնվում է Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ հասցեում, հայտարարում է մրցույթ, որն իրականացվում է մեկ փուլով: Մրցույթի արդյունքում հաղթող մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել անշարժ գույքի վարձակալության տրամադրման պայմանով՝ համապատասխան տարածքում սննդի կազմակերպման ծառայության մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն մրցույթին մասնակցելու հավասար իրավունք:

Մրցույթի մասնակիցների ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն մրցույթի մասնակցության իրավունքի պահանջներում:

Մրցույթում հաղթող մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկը, որը ճաշատեսակների /սնունդի/ միավոր գների գումարն է և պատվիրատուի կողմից վերջնական գնառաջարկի ձևավորման բանակցությունների հնարավորություն ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Մասնակցի կողմից կարող է առաջարկվել անհատական ճաշացանկ, որը նույնպես կդիտարկվի գնահատող հանձնաժողովի կողմից և կտրվի համապատասխան եզրակացություն:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համաձայն Հավելված 1-ի (Դիմում) և Հավելված 2-ի (Գնային առաջարկ) Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ հասցեով, փաստաթղթային ձևով մինչև (փակ ծրարով, ծրարի չորս անկյունները կնիքված և ստորագրված կազմակերպության ղեկավարի կողմից) սույն հայտարարությունը մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու օրվանից հաշված 5-րդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ը:

Հայտերի բացումը տեղի կունենա Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ հասցեում, **2020 թվականի հունիսի 26-ին ժամը 11:00-ին:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հարություն Գևորգյանին:

Հեռախոս՝ 010-28-29-60

Էլ. փոստ anpp@anpp.am

Մասնակցության իրավունքի պահանջներ

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի համապատասխան տարածքում սննդի կազմակերպման ծառայություն իրականացնող կազմակերպության ընտրության չափանիշներ և պահանջներ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) համապատասխան տարածքում (այսուհետ՝ ճաշարան և բուֆետ) անհրաժեշտ է իրականացնել հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ամբողջ անձնակազմի և տարածքում գտնվող այլ անձանց համար (հյուրեր, կապալառու կազմակերպություններ և այլն), ինչպես նաև մատուցել քեյթրինգ տեսակի ծառայություններ «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից ժամանակավոր հատկացված վայրերում:
- 1.2 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ճաշարանում գտնվող համապատասխան գույքը և սարքավորումները հանձնման-ընդունման ակտով վարձակալությամբ շահագործման կտրամադրվի պայմանագիր կնքած կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն): Հարկ է նշել, որ վերը նշված հանգամանքը անհրաժեշտ է արտացոլել մատուցվող սննդի գնագոյացման քաղաքականությունը մշակելիս, քանի որ կոմունալ ծառայությունների դիմաց՝ բացառությամբ էլեկտրաէներգիայի վճարի, ընտրված մասնակցի կողմից այլ վճարներ չեն նախատեսվում: Ընտրված մասնակցին վարձակալությամբ օգտագործման իրավունքով տրամադրվելու է փաստացի առկա գույքը և սարքավորումները (շարժական գույք կենցաղային տեխնիկա, կահույք, սպասք), որի վնասելու դեպքում ընտրված մասնակիցը պետք է հատուցի իր կողմից պատճառված բոլոր վնասները՝ ամբողջական ցանկին համապատասխանեցնելու նպատակով:
- 1.3 Կազմակերպությունը պետք է երաշխավորի, որ իր հաշվին կիրականացնի վերոնշյալ գույքի և սարքավորումների պատշաճ պահպանումն ու մասնագիտական վերանորոգումը իսկ պայմանագրի ավարտվելուց հետո գույքը և սարքավորումները պետք է վերադարձնի ամբողջական՝ համաձայն հանձնման-ընդունման արձանագրության, այն վիճակով, որով նա շահագործման է ընդունել՝ հաշվի առնելով դրանց բնականոն մաշվածությունը:
- 1.4 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ճաշարանում սննդի մատուցումը կազմակերպվելու է ինքնասպասարկման եղանակով, հոսքագիծ/բուֆե, իր համապատասխան նստատեղերով: Միաժամանակ, միջոցառումների համար նախատեսված սնունդը պատրաստվելու և մատուցվելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի լիազորված մարմնի/աշխատակցի հետ համաձայնեցված հատուկ ճաշացանկով, եղանակով և վայրում:
- 1.5 Ակնկալվում է օրվա ճաշացանկի ամբողջական և բավարար քանակության ապահովում՝ աշխատանքային օրերին ժամը 11:00-19:00 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի անձնակազմի համար (ակնկալվող թիվը մինչև 250 մարդ):
- 1.6 Շաբաթական ճաշացանկը շաբաթվա առաջին օրը պետք է տեղադրվի է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ներքին ցանցի հարթակում և փակցվի ճաշասրահում:
- 1.7 Կազմակերպությունը պետք է պահպանի հակահրդեհային և սանիտարահիգիենիկ կանոնները, հրշեջ հսկողության և սանիտարահամաճարակային հսկողության մարմինների պահանջները, ՀՀ գործող օրենսդրության նորմերը, որոնք կարգավորում են իր կողմից վարձակալած տարածքի համապատասխան գործունեության կարգը և տարածքի

պահպանման կանոնները՝ համաձայն առողջապահության նախարարի 2003թ. մայիսի 2-ի թիվ 302 հրամանի:

- 1.8 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի լիազորված մարմինը/աշխատակիցը կարող է ցանկացած ժամանակ մուտք գործել խոհանոցային/պահեստային տարածք՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ԲՊԲ-ում համապատասխան բուժզննություն անցնելուց հետո, համաձայն սննդի պահպանման և անվտանգության նորմերի և առանց խոչընդոտելու ճաշատրաստման գործնառնական ստուգել սննդի կազմակերպման ընթացքը, մատուցվող սննդամթերքի որակը և տեսականին, առկա սանիտարահիգիենիկ վիճակը, առկա մթերքի համապատասխանությունը ներկայացված (պայմանագրով ամրագրված) կամ ոլորտում ընդունված պահանջներին, ինչպես նաև վերցնել մատուցվող սննդի նմուշ՝ համապատասխան լաբորատոր փորձաքննության ներկայացնելու նպատակով:

2. Աշխատանքի կազմակերպման պահանջներ և չափանիշներ

- 2.1. Ճաշատեսակները պետք է պատրաստվեն տեղում, օրական կտրվածքով, թարմ մթերքից (տաք/սառը մսային ուտեստները պետք է պատրաստված լինեն թարմ տեղական (չներկրված) մսից) համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր նորմերին:
- 2.2. Արգելվում է սնունդը պատրաստելիս օգտագործել՝ արմավենու յուղ, սփրեդ, ԳՄՕ և այլ հայտնի անառողջ բաղադրիչներ, ինչպես նաև կիրառել պատրաստման անառողջ եղանակներ (յուղերի բազմակի օգտագործում, միկրոալիքային վառարանի մեջ պատրաստում և այլն) պահպանելով «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի պահանջները:
- 2.3. Սննդի պատրաստման համար կամ սրահում վաճառքի նպատակով օգտագործվող ապրանքները պետք է ձեռք բերվեն շուկայում կայացած (հայտնի) արտադրողներից՝ հատկապես այն դեպքերում, երբ պահանջվում է որակի և ծագման հավաստագրեր:
- 2.4. Ճաշատեսակների պատրաստման, հաճախորդների սպասարկման և ճաշարանի ամենօրյա բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով, բացի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված գույքը, անհրաժեշտության դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ապահովել լրացուցիչ պահանջվող որակյալ գույքով (թե հիմնական, և թե արագամաշ միջոցներ), օրինակ՝ սպասք, խոհանոցային սարքավորումներ ու պարագաներ և այլն:
- 2.5. Կազմակերպության ամբողջ աշխատակազմը պետք է լինի փոխարինելի, այսինքն՝ աշխատակազմից որևէ մեկի աշխատանքից բացակայելու դեպքում աշխատանքը հնարավոր լինի իրականացնել նույն որակով, քանակությամբ և ժամանակահատվածում՝ ապահովելով ճաշարանի բնականոն աշխատանքը:
- 2.6. Կազմակերպությունը պետք է ճաշարանի տարածքում ապահովի առնվազն 2 դրամարկղի առկայություն և անկանխիկ վճարման այլընտրանքային միջոցներ:
- 2.7. Անհրաժեշտ է ճաշարանի տարածքում ապահովել առնվազն 1 հսկիչ կշեռքի առկայություն:
- 2.8. Ունենալ տեղում աշխատող մասնագետ-ներկայացուցիչ (մենեջեր), որը անմիջական կապի մեջ կլինի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի լիազորված մարմնի/աշխատակցի հետ ծագած հարցերին արագ արձագանքելու նպատակով:
- 2.9. Ունենալ տոնական հանդիսությունների և այլ միջոցառումների, (սեմինարների, կոնֆերանսների, գազաթնաժողովների, ֆուրջետների և այլ նմանատիպ

առիթների (այսուհետ՝ միջոցառում) ժամանակ մատուցվող սննդի (նախաճաշեր, ճաշեր, բանկետային ճաշկերույթներ և ֆուրջետներ, սուրճի ընդմիջումներ և սենյակների մինի-բարեր և այլն) կազմակերպման հնարավորություն:

- 2.10. Միջոցառումների սննդի կազմակերպումն իրականացնելու համար ունենալ սեփական սպասք, պրոֆեսիոնալ սարքեր, ինչպես նաև համապատասխան պարագաներ (աթոռներ, սեղաններ, ստենդեր և այլն):
- 2.11. Անհրաժեշտ է կազմակերպության կողմից ճաշարանում աշխատանքի տարածքային կազմակերպման ինչպես նաև ճաշարանի գործարկման կարգի նախնական համաձայնեցում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի լիազորված մարմնի/աշխատակցի հետ:
- 2.12. Խրախուսվում է ամենօրյա սննդի և տոնական օրերին սննդի ներկայացման առանձնահատուկ միջոցառումների կազմակերպումը (ազգային խոհանոցների օրեր, համտեսներ և այլն) և հաճախորդների հետ հարաբերությունների խրախուսական մեխանիզմների պարբերական կիրառումը:
- 2.13. Պայմանագիրը կկնքվի այն մասնակցի հետ՝
 - 1) որն ունի առաջարկը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) մասնագիտական փորձ (անհրաժեշտ է կցել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր),
 - 2) որն ունի հանրային սննդի կազմակերպման յուրաքանչյուր գործառույթի իրականացման համար սահմանված որակավորում ունեցող անձնակազմ,
 - 3) որի ամբողջ անձնակազմն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան բժշկական փաստաթղթեր և համապատասխան արտահագուստ,
 - 4) որի կողմից ներկայացված ընդհանուր գնային առաջարկն ամենացածրն է Հավելված 2-ով հրապարակված ճաշացանկի համար:
- 2.14. Կազմակերպությունը իր միջոցներով պետք է իրականացնի՝
 - 1) ճաշարանի և հարակից տարածքի սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքները,
 - 2) ճաշարանի և հարակից տարածքից կենցաղային և/կամ արտադրական թափոնների, աղբի աղբավայր տեղափոխումը,
 - 3) պետք է ապահովի անձեռոցիկների, կերակրի աղի և պղպեղի առկայությունը ճաշարանում:
- 2.15. Այլ պայմաններ՝
 - 1) Կատարողը կրում է ամբողջական պատասխանատվություն ճաշարանի շահագործման ընթացքում սննդի և տեխնիկական անվտանգության մասով:
 - 2) Կատարողը պարտավոր է եռամսյակը մեկ անգամ կամ համապատասխան օրենքով սահմանված ժամկետներում «ՀԱԷԿ» ՓԲԸ ներկայացնել տեղեկաք սանեպիտկայանի, կամ նմանատիպ այլ կառույցի կողմից կատարված ստուգումների վերաբերյալ:
 - 3) Գնային առաջարկը պետք է ներկայացվի մեկ թվով, որը ճաշատեսակների /սնունդի/ միավոր գների գումարն է:
 - 4) Պատվիրատուն կատարողին ծառայության մատուցման դիմաց չի վճարում, վճարումը իրականացվելու է աշխատակիցների կողմից՝ ըստ պատվերի:
 - 5) Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցելուց 40 օր առաջ, Պատվիրատուի ղեկավարությանը ներկայացնի համապատասխան փաստաթղթեր՝ թույլտվություն (մուտքի անցագիր) ստանալու համար:

- 6) Պատվիրատուի կողմից թույլտվությունը տրամադրվում է լիազոր մարմնի (ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԱԾ) կողմից տրամադրված հուսալիության դրական եզրակացության հիման վրա՝ համաձայն ՀՀ կառավարության №744 առ. 09.06.2005 Որոշման:

3. Ճաշացանկ և գնագոյացում

- a. Երկու շաբաթվա ճաշացանկի նախապես համաձայնեցում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի լիազորված մարմնի/աշխատակցի հետ;
- b. Հայտարարված շաբաթական ճաշացանկում հակիրճ նշել բարդ (մեկից ավել հիմնական բաղադրիչ ունեցող) ճաշատեսակների բաղադրիչները և պատրասման եղանակը;
- c. Ճաշարանի ամենօրյա փոփոխվող ճաշացանկով և բազմազան տեսականիով հոսքագիծը և դարակաշարերը պետք է ներառեն (բայց չսահմանափակվեն)
 - 1) աղցանների և խավարտների, մսային, ձկնային, խմորային, տեղում պատրաստված թարմ հրուշակեղենի և այլ ուտեստների բազմազանություն,
 - 2) այլընտրանքային առաջարկներ, օրինակ՝
հաց՝ լավաշ, սև հաց, հատուկ թարմ թխված,
հյութեր՝ գազավորված, թարմ քամած, բնական,
ճաշատեսակներ՝ խաշած, շոգեխաշած և տապակած տարբերակներ,
 - 3) թարմ մրգեր ու բանջարեղեններ,
 - 4) առանձին **«առողջ/դիետիկ սննդի»** հատված (սպիտակուցներով հագեցած, ցածր յուղայնությամբ, ցածր աղի և շաքարավազի պարունակությամբ, ածխաջրերի ցածր պարունակությամբ և այլն),
 - 5) Salad Bar («հավաքիր աղցանը ինքդ»),
 - 6) Take away («վերցրու քեզ հետ»)՝ լանչ բոքսերով տրվող սնունդ:
 - Ա. Ճաշարահում վաճառվող պատրաստի ապրանքների և ապրանքանիշերի բազմազանություն (առնվազն 3 տարբեր կազմակերպությունների արտադրանքի ապահովում): Այս ապրանքների գինը որոշելիս պետք է գործի «կազմակերպության կողմից ապրանքի գնման գնի մինչև 15%-ի չափով ավելացման» պայմանը:
 - Բ. Պայմանագրով կամ այլ փաստաթղթով ամրագրված սննդի գինը չի կարող փոխվել առանց «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի լիազորված մարմնի/աշխատակցի համաձայնության: Գնաձից բխող գնային փոփոխությունները կարող են իրականացվել ոչ շուտ քան 6 ամիսը մեկ:
 - Գ. Ներկայացվող ճաշացանկը պետք է ընդգրկի բավարար այնքան կերակրատեսակ, որ բացի մշտապես ներկայացված պարզ/դիետիկ ուտեստներից (խաշած միս, բանջարեղեն, ընդեղեն և այլն), օրվա ընթացքում մատուցվող տեսականու առնվազն 40%-ը տաս օրվա ընթացքում չկրկնվի:
 - Դ. Տոնական օրերին, հատկապես Մեծ պահքի շրջանում առաջարկել նաև համապատասխան սնունդ: